



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

4 սեպտեմբերի 2017թ. թիվ 154

Հ.ՊԱՊՈՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, 18-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին» թիվ 546-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով՝

Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ (65-2.1-1) Հրայր Մարտինի Պապոյանին 2017 թվականի սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 6-ը ներառյալ գործուղել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1093-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացներին:

2. Հ.Պապոյանի բացակայության ժամանակ փոխարինող նշանակել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 4  
ք.Վանաձոր